ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

*Համարը* ՀՕ-84-Ն
*Տիպը* Օրենք
*Սկզբնաղբյուրը* ՀՀՊՏ 2017.06.01/34(1309) Հոդ.544
*Ընդունող մարմինը* ՀՀ Ազգային ժողով
*Ստորագրող մարմինը* ՀՀ Նախագահ
*Վավերացնող մարմինը*
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 02.06.2017
*Տեսակը* Հիմնական
*Կարգավիճակը* Գործում է
*Ընդունման վայրը* Երևան
*Ընդունման ամսաթիվը* 31.05.2017
*Ստորագրման ամսաթիվը* 01.06.2017
*Վավերացման ամսաթիվը*
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2017 թվականի մայիսի 31-ին

## «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 3-րդ մասում «ղեկավար-նախարարը» բառերը փոխարինել «ղեկավարը» բառով:

**Հոդված 2.** Օրենքի 1-ին հավելվածում՝

1) «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար» տողում «10.00» թիվը փոխարինել «12.00» թվով.

2) «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ» տողի «9.00» թիվը փոխարինել «10.00» թվով.

3) «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի տեղակալ» տողի «8.00» թիվը փոխարինել «8.50» թվով.

4) «ՀՀ կառավարության աշխատակազմ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| «**ՀՀ կառավարության աշխատակազմ** | |
|---|---|
| ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար | 12.00 |
| ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ | 10.00 |
| ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ | 8.50 |
| ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական | 10.00 |
| ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավար | 9.50 |

| | |
|---|---|
| ՀՀ վարչապետի խորհրդական | 9.50 |
| ՀՀ վարչապետի ավագ օգնական | 8.50 |
| ՀՀ վարչապետի օգնական | 8.00»: |

**Հոդված 3.** Օրենքի 2-րդ հավելվածում՝
1) «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի խորհրդական» տողի «4.50» թիվը փոխարինել «5.50» թվով.
2) «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնական» տողի «4.00» թիվը փոխարինել «4.50» թվով.
3) «ՀՀ կառավարության աշխատակազմ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| «ՀՀ կառավարության աշխատակազմ | |
|---|---|
| ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար | 8.00 |
| ՀՀ վարչապետի ռեֆերենտ | 6.00 |
| ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի խորհրդական | 5.50 |
| ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի օգնական | 4.50»: |

**Հոդված 4. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**Նախագահ**

**Ս. Սարգսյան**

2017 թ. հունիսի 1
Երևան
ՀՕ-84-Ն